ԳՐԱԿԱՆ-ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԵՒ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՆՈՐ ՏԱՐԻ

Եկաւ Նոր Տարին ու բերեց իւր հետ
Ե՛ւ ամբաւ հրճուանք, և՛ վիշտ ու աղէտ։
Քեզ խինդն է բաժին, մեծատուն, հրճուիր.
Իսկ դո՛ւ, չքաւոր, ցաւի որդեգիր,
Կարիքն—անբաժան ընկեր քո կենաց,
Դռնակդ է բաղխում՝, դէհ ել, դուռը բաց։
Թող աղէտների մայրը չարախինդ
Անյաղ որկորով մտնէ քո խրճիթ
Եւ արիւնարբու իւր ժանիքների
Հաճոյքի համար նոր աւար փնտրի.
Իսկ դու թէև մերկ՝ անվախ, անյողդողդ
Կանգնիր նրա դէմ՝ հպարտ ու խրոխտ.
Եւ նրա մոլի, վայրենի ցասման
Մի հեգնող ժպի՛տ՝ իբրև պատասխան . . .
Եւ քո հեգնանքով՝ քան սուրը զօրեղ,
Հաւատա՝, կընկճես թշնամուդ ահեղ . . .

Յարութիւն Պետրոսեան.